

ՏՕՍ ԵՐԵԿԱՆ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ

20 ԱՊՐԻԼ 2008

Կիրակնօրեայ ընթերցումներ	էջ 1-2
Բացատրութիւն	էջ 2-3
Ժամանակացոյց եւ Ծանուցում	էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ
 «ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ»
 ԳԻՐՔԵՆ
 (17.1-15)

Ամփիպոլիս եւ Ապողոնիա քաղաքները շրջելէ ետք Պօղոս եւ Շիղա Թեսաղոնիկէ եկան ուր հրեաներու ժողովարան մը կար: Պօղոս ըստ իր սովորութեան ժողովարան գնաց, եւ երեք Շաբաթ օրեր անոնց քարոզեց: Կը բանար ու կը բացատրէր Գիրքերը, անոնցմով կ'ապացուցանէր թէ ի'նչպէս Քրիստոս պիտի չարչարուէր ու մեռելներէն յարուցիլն առնէր, եւ կ'ըսէր. «Այն Յիսուսը զոր ես ձեզի կը քարոզեմ, ա'ն է Քրիստոսը, խոստացուած Փրկիչը»: Թեսաղոնիկեցիներէն ոմանք հաւատացին եւ Պօղոսի ու Շիղայի յարեցան: Նոյնպէս անոնց յարեցան շատ մը աստուածապաշտ յոյներ եւ նկատառելի թիւով երեւելի կիներ:

Հրեայ առաջնորդներ նախանձեցան, եւ փողոցներէն քանի մը դատարկապորտ անօրէններ հաւաքելով ամբոխ կազմեցին, ամբողջ քաղաքը խռովեցին եւ Յասոնի տան վրայ խուժեցին՝ Պօղոսն ու Շիղան բռնելու եւ ժողովուրդին առջեւ հանելու համար: Բայց երբ գանոնք չգտան, Յասոնն ու քանի մը ուրիշ հաւատացեալներ քաշեցին տարին քաղաքի իշխաններուն առջեւ, պոռալով. «Այն մարդիկը որոնք ամբողջ աշխարհը իրար անցուցին, հիմա մեր քաղաքը եկեր են, եւ Յասոն իր տունը առեր է գիրենք: Ասոնք բոլորը կայսեր օրէնքներուն հակառակ կը գործեն, որովհետեւ ուրիշ թագաւոր մը կը ճանչնան, Յիսուս անունով»: Այս խօսքերով անոնք խռովեցուցին ամբոխը եւ քաղաքի իշխանները: Սակայն իշխանները Յասոնէն եւ

միւս քրիստոնեաներէն երաշխաւորութիւն առնելով ազատ արձակեցին գանոնք:

Հազիւ գիշերը վրայ հասած, քրիստոնեաներ Բերիա զրկեցին Պօղոսն ու Շիղան, որոնք երբ հոն հասան՝ հրեաներու ժողովարանը գացին: Բերիայի հրեաները աւելի ազատամիտ էին քան թեսաղոնիկեցիները, ուստի մեծ յօժարութեամբ ընդունեցին Աստուծոյ խօսքը եւ ամէն օր Գիրքերը կը քննէին, տեսնելու համար թէ ճշմարի՞տ են Պօղոսի քարոզածները: Անոնցմէ շատեր հաւատացին: Նմանապէս հաւատացին բազմաթիւ ազնուական յոյն կիներ եւ այրեր: Բայց երբ Թեսաղոնիկէի հրեաները իմացան թէ Պօղոս Բերիայի մէջ եւս Աստուծոյ խօսքը քարոզեց, հոն ալ եկան ժողովուրդը գրգռելու եւ խռովութիւն ստեղծելու համար: Ուստի հաւատացեալները անմիջապէս Պօղոսը մինչեւ ծովեզերք զրկեցին, իսկ Շիղա եւ Տիմոթէոս հոն մնացին: Պօղոսի ընկերացողները զինք մինչեւ Աթէնք հասցուցին եւ ապա Բերիա դարձան, Շիղայի եւ Տիմոթէոսի համար Պօղոսէն պատուէր առնելով որ շուտով գան իր մօտ:

ԸՆԹԵՐՑՈՒՄ
 ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ
 ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԵՆ
 (1.1-10)

Մենք լսեցինք, մեր աչքերով տեսանք եւ մեր ձեռքերով շօշափեցինք Որդին, Բանը, որ սկիզբէն իսկ կեանքի ստեղծիչն էր: Անիկա նոյնինքն կեանքն էր որ յայտնուեցաւ: Մենք տեսանք եւ կը վկայենք, ձեզի պատմելով անոր մասին, այսինքն յաւիտեանական կեանքին մասին, որ Հօրը հետ էր եւ այժմ մեզի յայտնուեցաւ: Ինչ որ տեսանք ու լսեցինք կը պատմենք ձեզի, որպէսզի դուք ալ մասնակից դառնաք այն հաղորդակցութեան որ մենք ունինք Հօրը եւ անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի հետ, եւ ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ: Ահա թէ ինչու կը գրենք ձեզի այս նամակը:

ԺԲ

ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ԵՐԵՒՄԱՆ ՏՕՆ

Հարցումներ.

- 1.- Ս. Խաչի Երեւման տօնը ի՞նչ կը յիշատակէ: Ինչո՞ւ արդեօք դասաւորուած է Յինունքի այս Կիրակիին համար:
- 2.- Կիւրեղ Երուսաղէմացիի նամակին մասին:
- 3.- Ի՞նչ կ'ըսեն Ս. Գրային ընթերցումները:

Պատասխաններ.

1.- 351 թուականի Հոգեգալստեան ցերեկին, «ամենայադ խաչն ի լուսյ կազմեալ՝ ի յերկնից գեր ի վերոյ սրբոյն Գողգոթայի մինչեւ ի սուրբ լեառն Զիթենեաց ցոլացեալ երևեալ», այսինքն՝ Գողգոթայէն մինչեւ Զիթենեաց լեռ՝ ամենայադ խաչը նառագայթարձակ կը ցոլար: Չայն կը տեսնէին ոչ թէ մէկ կամ երկու հոգի, այլ Երուսաղէմի ամբողջ ժողովուրդը: Լուսաւոր խաչը երկար ժամեր կը մնար եւ «բոցանանց չիմ փայլամար՝ արեգակնայիցն յաղթէր նառագայթից: Ապա թէ ոչ՝ ի նոցանէ յաղթահարեալ ծածկեալ լինէր» (թարգմ. «արեգակի նառագայթներուն կը յաղթէր բոցանանց փայլումով: Եւ անոնք յաղթուած՝ կը ծածկուէին»):

Բազմութիւններ եկեղեցի կը փութային ուրախ եւ «աստուածատեսութեան երկիր» յը իրենց արտերուն: Եկեղեցի հասնելով, ամէնքը միահամուռ եւ միաբերան Աստուծոյ Միածին Որդին՝ Յիսուս Քրիստոսը կ'օրհնաբանէին եւ կը գովաբանէին (Կիւրեղ Երուսաղէմացիի ձառը Առ Կոստանդինոս Թագաւոր):

Ս. Խաչի Երեւման տօնը այս փորձառութիւնը կը յիշատակէ: Օղբերութեան արեւմտեան դէպքի մը մասին է անիկա, որ մեկնաբանուած է իբր Աստուծմէ վկայութիւն՝ թէ քրիստոնէական կրօնքը «ամենաբարեպաշտիկ»ն է (Նոյն):

Թէ ինչո՞ւ այս Կիրակիին համար դասաւորուած է կատարել Ս. Խաչի Երեւման յիշատակումը:

Ըստ Շնորհք արքեպիսկոպոսի, Ս. Խաչին Երեւումը «կերպով մը» նախորդ Կիրակիի իմաստին շարունակութիւնը եւ լրումն է: Ան Կարմիր Կիրակիին առիթով ըսած էր, թէ քրիստոնէական կեանքը «պայքար մըն է ազնուական նպատակներ իրագործելու համար, ինքզինք կերտելու եւ կատարելագործելու համար. պայքար մը՝ ընկերութեան մէջ վիտաւոյ չարիքները չէզոքացնելու համար, պայքար մարդկութեան մէջ սէր, եղբայրութիւն, խաղաղութիւն հաստատելու համար»: Եւ անեցուցած թէ՛ ասոնք հոգեկան ոյժ, քաջութիւն եւ գոհողութիւն պահանջող գործեր են. ասոնց իրագործման համար՝ «Խաչը առնել եւ Քրիստոսի հետեւիլ» կը պահանջուի: Եւ Խաչին նամբան կը վերածուի յաղթանակի: Ս. Խաչի Երեւման տօնը այդ յաղթանակը կը խորհրդանշուի: Շարունակելով արքեպիսկոպոսի բացատրութիւնը՝ «Ս. Խաչի Երեւման մէջ նշանակալից պարագան այն է, որ լուսեղէն սուրբ նշանը կ'երկարի Գողգոթայէն մինչեւ Զիթենեաց լեռան կատարը: Գողգոթան Յիսուսի Խաչի նանապարհին գագաթն է, վերջակէտն է. իսկ Զիթենեաց լեռը այն կատարն է, ուրկէ երկինք համբարձաւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս...»

Պատգամը որ լսեցինք եւ ձեզի կը փոխանցենք, սա է՝ թէ Աստուած լոյս է. բնաւ խաւար չկայ անոր մէջ: Արդ, եթէ ըսենք «հաղորդակից ենք իրեն» եւ միւս կողմէ շարունակենք խաւարի մէջ ապրիլ, կը ստենք անա եւ ճշմարտութեան դէմ կը գործենք: Իսկ եթէ Աստուծոյ լոյսին մէջ քայլենք, ինչպէս ինք լոյսի մէջ է, այն ատեն ճշմարտապէս հաղորդակից կ'ըլլանք իրարու, եւ իր Որդւոյն Յիսուսի արիւնը կը սրբէ մեզ ամէն մեղքէ:

Եթէ ըսենք «մեղք չունինք», մենք մեզ կը խաբենք եւ կը մերժենք ճշմարտութիւնը ընդունիլ: Իսկ եթէ խոստովանինք մեր մեղքերը, վստահ եղէք թէ Աստուած որ արդար է՝ պիտի ներէ մեր մեղքերը եւ մեզ պիտի սրբէ մեր բոլոր անիրաւութիւններէն: Եթէ «մեղք չգործեցինք» ըսենք, ստախոս կը հանենք զԱստուած, քանի իր խօսքը չենք ընդունիր:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
 ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
 (7.14-24)

Տաղաւարահարաց տօնակատարութեան մօտաւորապէս կէսին, Յիսուս տաճար ելաւ եւ սկսաւ ուսուցանել: Հրեաներ կը զարմանային եւ կ'ըսէին. «Ինչպէ՞ս այս մարդը Սուրբ Գիրքերը գիտէ, երբ բնաւ չէ ուսած զանոնք»: Յիսուս պատասխանեց անոնց. «Ինչ որ ձեզի կ'ուսուցանեմ՝ իմ վարդապետութիւնս չէ, այլ անորը՝ որ զիս զրկեց: Ով որ կ'ուզէ Աստուծոյ կամքը կատարել, պիտի հասկնայ թէ Աստուծմէ՞ է այս վարդապետութիւնը, թէ ես ի՞մ հեղինակութեամբս կը խօսիմ: Ան որ իր հեղինակութեամբ կը խօսի՝ իր անձին համար փառք կը փնտռէ, իսկ ան որ զինք զրկողին փառքը կը փնտռէ, ճշմարիտ է եւ խաբէութիւն չկայ անոր մէջ: Մովսէս ձեզի Օրէնքը չտուա՞ւ. սակայն ձեզմէ ոչ ոք կը հնազանդի Օրէնքին: Ինչո՞ւ կ'ուզէք զիս սպաննել»: Ժողովուրդը պատասխանեց. «Դիւահա՞ր ես, ի՞նչ ես. ո՞վ կ'ուզէ քեզ սպաննել»: Յիսուս պատասխանեց. «Հրաշք մը գործեցի եւ բոլորդ վրդովեցի էք: Մովսէս հրահանգեց թլփատել ձեր զաւակները - թէ եւ Մովսէս չէր սկսողը, այլ ձեր նախահայրերը - եւ դուք ձեր զաւակները կը թլփատէք Շաբաթ օրով: Եթէ մէկը կը թլփատէք Շաբաթ օրով, որպէսզի չբեկանուի Մովսէսի Օրէնքը, ինչո՞ւ զայրացած էք ինձի դէմ, որովհետեւ մէկը ամբողջութեամբ բժշկեցի Շաբաթ օրով: Երեւոյթներէն մի՛ դատէք, այլ արդար դատաստան կատարեցէք»:

Համբարձման լեռը, այլաբանորեն երկինքի մուտքն է: Ինչ որ կը նշանակէ, թէ Ս. Խաչը կ'առաջնորդէ զմեզ դէպի յաւերժութիւն, դէպի յաւիտեանական կեանք»:

Ըստ իս, Ս. Խաչի Երեւման տօնը այս Կիրակիին կատարելու համար դասաւորուած է մասեւ, որովհետեւ անկա տեղի ունեցած է Հոգեգալստեան տօնին օրը: Եւ երկնային այդ գարմանալիքը բազմութիւններ մղած է եկեղեցի օրհնաբանելու եւ գովաբանելու «Որդին Աստուծոյ՝ զսխրագործն», աշխնմն՝ ան որ խաչին վրայ մահուամբ՝ յաղթեց մահուան եւ իրեն հաւատացողներուն յաւիտեանական ու անապական կեանք, եւ հոգեւոր ու երկնային շնորհներ պարգեւեց: Արդ, Ս. Խաչի այս տօնը կը մղէ դէպի այն եկեղեցին, որ «յայտնութեամբ Հոգւոյն եւ գօրութեամբ նորին է հաստատեալ»: Այս դասաւորման այլ պատճառ մըն ալ է Յիսուսի խոստումը, որ կ'ըսէ՝ «Ձեզի համար լաւ է, որ ես երթամ, որովհետեւ եթէ չերթամ՝ Միջբարիչը պիտի չգայ ձեզի»: Եւ Ս. Խաչը մասեւ խորհրդանշանն է Յիսուսի երթալուն: Ս. Խաչի Երեւման տօնը՝ որպէսզի Միջբարիչ Ս. Հոգին գայ:

2.- Ո՞վ էր Կիրեղ Երուսաղէմացի: Ընդհանրական եկեղեցւոյ աստուածաբաններէն, կամ ինչպէս կ'ըսուի՝ Վարդապետներէն է: Դ. դարու դէմք: Երուսաղէմի եպիսկոպոս: Եղած է համախոհներէն Տիեզերական Առաջին Ժողովին՝ Նիկիոյ վարդապետութեան, որ Աստուծոյ Որդին Հօր էակից եւ Բնութեանակից կը յայտարարէր:

Կիրեղ Երուսաղէմացիի գրական վաստակէն շատ բան չէ հասած: Անկէ մեր հայրերուն կատարած թարգմանութիւններու ցանկը կարելի է գտնել «Մատենադարան Հայկական Թարգմանութեանց Նախնեաց» գիրքին մէջ (Վեներտիկ, 1889):

«Առ Կոստանդինոս» նամակը գրուած է, նախ որովհետեւ հեղինակը արժանի տեսած է «գերկնաւորս գայս աստուածատեալութիւն» լուծեան չտալ, այլ Կայսրին աւետարանել. եւ երկրորդ՝ որովհետեւ ուզած է Ս. Խաչի Երեւման բարի լուրը հաղորդելով՝ Կայսրին հաւատքը առաւել քաջակերել, եւ յորդորել երկնաւորութեամբ գգոյշ ըլլալու, որպէսզի «հակառակորդներ» ազդեցութեան տակ չլինայ եւ «վնասներ» չկրէ, այլ «վայելուչ ուղղութեամբ» գօրանայ: Որո՞նք էին ակնարկեալ «հակառակորդներ»ը: Տիեզերական Առաջին Ժողովին դատապարտուած Արիոսի հետեւորդներն էին անոնք. արիոսականութիւնը մերժեց Աստուծոյ Որդիին՝ Հօր Աստուծոյ էակից եւ Բնութեանակից ըլլալը:

Աւանդաբար այս նամակը կը կարդացուի նախքան Ս. Պատարագը՝ Անդաստանի Ս. Գրային ընթերցումներէն առաջ:

3.- Այս Կիրակիի Ս. Գրային ընթերցումներն են. Առաքելներուն Գործերը Գիրքէն՝ 17.1-15: Յովհաննէս Ընդհանրական Առաջին Նամակէն՝ 1.1-10: Յովհաննէսի Աւետարանէն՝ 7.14-24:

Առաջին ընթերցումը: Կը վերաբերի Թեսաղոնիկէի եւ Բերիայի մէջ Պօղոս Առաքելի եւ Յիսուսի աշակերտներէն՝ Շիղայի ֆարոզութեան:

Առաքելը երեւ Շաբաթ օրեր Թեսաղոնիկէի մէջ ժողովարան կ'երթայ եւ կը ֆարոզէ: Իր առաջադրութիւնը կ'ըլլայ ցոյց տալ՝ թէ Սրբազան Գիրքերը կանխաւ խօսած են Քրիստոսի չարչարաններուն եւ մեռելներէն յարութեան մասին: Եւ զՔրիստոս կը յայտարարէ որպէս խոստացուած Փրկիչը:

Առաքելին ֆարոզութիւնը իր պտուղները պիտի տար: Այդ պատճառով հրեայ դեկավարներ պիտի նախանձէին եւ խոտովութիւն ստեղծէին ֆաղափն մէջ:

Բերիա հասնելով՝ Պօղոս եւ Շիղա ժողովարան կ'երթան: Բերիայի հրեաները «աւելի ազատամիտ» կը գտնեն: Անոնցմէ շատեր Սրբազան Գիրքերը «փնտրել» են՝ նշմարիտ կը գտնեն Առաքելին ըսածները եւ կը հաւատան: Ինչպէս Թեսաղոնիկէի մէջ «աստուածապաշտ յոյներ եւ նկատաւելի թիւով երեւելի կիներ յարած էին» Առաքելին եւ ընկերոջ, նոյնպէս Բերիայի մէջ «ագնուական կիներ եւ այրեր» կը միանային անոնց: Թեսաղոնիկէի հրեայ դեկավարները Բերիա փութալով, հոն ալ «ժողովուրդը գրգռելու եւ խոտովութիւն ստեղծելու» կը նային: Առաքելը խոյս կու տայ անոնցմէ եւ Աթէն կ'երթայ: Բերիա կը մնայ Շիղա, հետը՝ Տիմոթէոսի, որ այնտեղ կը գտնուէր այդ միջոցին:

Երկրորդ ընթերցումը: Ասիկա խոստովանութիւն է նախագոյ Աստուծոյ Որդիին՝ Աստուած Բանին մասին, որ «սկիզբէն իսկ կեանքի ստեղծիչն էր»: Ան՝ որ Հօր հետ էր՝ յայտնուեցաւ եւ պատգամեց թէ՛ Աստուած լոյս է եւ թէ բնաւ խաւար չկայ անոր մէջ:

Առաքելը կը շեշտէ հետեւեալը. Որդիին հաղորդակից ըլլալու համար անհրաժեշտ է «Աստուծոյ լոյսին մէջ» փայլել: Անոնք որ այդ հանապարհին մէջ կը փայլեն՝ «նշմարտապէս հաղորդակից կ'ըլլան իրարու»: Շատ յստակ է Առաքելին ըսածը. «Աստուծոյ լոյսին մէջ» փայլելը էապէս կապուած է մեր նմաններուն հետ «հաղորդակից» ըլլալուն: Իսկ մեր նմաններուն հետ «հաղորդակից» ըլլալ՝ կը նշանակէ անիրաւ չըլլալ անոնց նկատմամբ: Ըստ Առաքելին, անիրաւութեան գլխաւոր աղբիւրը սեփական անձը անմեղ տեսնելն է: Հիմնական է ընդունիլ անձին մեղաւորութիւնը եւ խոստովանիլ առ Աստուած: Ու Աստուած «պիտի ներէ մեր մեղքերը եւ մեզ պիտի սրբէ մեր բոլոր անիրաւութիւններէն»: Սեփական անձը անմեղ տեսնողը՝ ինքզինքն Աստուծոյ տեղ դրած կ'ըլլայ, այլ բացատրութեամբ մը սխալ ինքնաճանաչման կամ խաւարին մէջ կ'ըլլայ:

Երրորդ ընթերցումը: Յիսուս իր ուսուցումը կը ներկայացնէ որպէս վարդապետութիւնը անոր՝ որ զինքն զրկեց, աշխնմն՝ Հօր Աստուծոյ: Եւ Հօր Աստուծոյ վարդապետութիւնը՝ փրկութեան ուսուցում է եւ ոչ թէ Սրբազան Գիրքերը սովորովի «գիտնալ»ու: Մովսէսի Օրէնքին տառը սորվիլը՝ բաւարար չէ Աստուծոյ կամքը կատարելու համար: Անհրաժեշտ է «արդար դատաստան» ընել եւ Օրէնքին տառէն անդին տեսնել Աստուծոյ կամքը՝ որ մարդուն փրկութիւնը կ'ըզէ:

Ինչպէ՞ս այս հատուածները իրարու կը կապուին:

Ահա առանցքը. Աստուածաշունչին խորքը ֆրիստոսաբանական է. Ս. Գիրքը խաչեալ եւ յարուցեալ Քրիստոսով փրկութիւնը կը յայտնէ:

Ուրկէ՞ կու գայ այս սկզբունքը: Ըստ Աւետարաններուն՝ յարուցեալ Քրիստոսէն: Եւ արդարեւ, Ս. Գիրքին տառացի ֆնտրութիւնը չի յայտնէր անոր ֆրիստոսաբանական խորքը. այդ յայտնութիւնը յարութիւն առած Քրիստոսի վրայ հաւատէն կը բխի:

Հոս
ԳԸ

**ՅԱԶՈՐԻ ԸՐԲԹՈՒՎ
ԺԱՆԱՆԿԱՅՈՅ**

Երեքշաբթի, 22 Ապրիլ 2008

10.00 > Ս. Գրային սերտողութիւն՝
Ս. ՅԱԿՈԲ Զոյրերու ժողով

Յինգշաբթի, 24 Ապրիլ 2008

11.00 > Աղօթածողով՝
Ս. ՅԱԿՈԲ քոյրերու ժողով

Շաբաթ, 26 Ապրիլ 2008

18.30 > Ս. Գրային սերտողութիւն՝
Յայ երիտասարդներուն համար

Կիրակի, 27 Ապրիլ 2008

09.30 > Առաւօտեան ժամերգութիւն
11.00 > Ս. Եւ անմահ Պատարագ

ԱՊՐԻԼԵԱՆ

I

Ս. ՊԱՏԱՐԱԳ

Հինգշաբթի, 24 Ապրիլ, 2008
Երեկոյեան ժամը 7.00-ին

II

**Միջ-Յարանոհանական
Ոգեկոչում**

Ուրբաթ, 25 Ապրիլ, 2008
Երեկոյեան ժամը 8.00-ին
Հայ Արեւմտեան Մայր Եկեղեցի, ԼԵԽՂ

III

Ս. ՊԱՏԱՐԱԳ

Կ'երգէ «Նոր Ծաղիկ» Կրօնաբանութիւն
Երգչախումբ
Կիրակի, 27 Ապրիլ, 2008
Առաւօտեան ժամը 11.00

ՀՈԳԵԻՈՐ ՀԱՄԵՐԳ

Հոգաւարութեամբ՝
**ԳԱՆՏԱՅԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ
ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ**

Կաշապարտութեամբ՝
**Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋԱՆՈՒԿԱՆԻՍ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑՈՅ
ԵՒ
Ս. ԳԵՐՈԳ ԵԿԵՂԵՑՈՅ**

ՆՈՒՐՈՒԾ
ԱՌԱՋԱՆՈՒՊ՝
**ԳԵՐՇ. Տ. ԽԱԺԱԿ
ԱՐԲ. ՅԱԿՈԲԵԱՆԻ
40-ԱՄԵԱՅ ՀՈԳԵԻՈՐ
ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ**

Գեղարուեստական Յայնագրին
ԿՐ ԱՅԱՆԿՅՈՒՆ.

ՅԱՄԻԿ ԳԱՍՊԱՐԵԱՆ, ՅԱՄԻԿ
ԳԱԽԱԵԱՆ, ՅԱՄԻԿ ԻՆՃԷՃԻԿԵԱՆ

«Նոր Ծաղիկ» Երգչախումբը՝
ԽԱՐԱԿԱՐՈՒԹԵԱՐ՝ ԷՅՈ ՀԱՐՈՅԵԱՆԻ
ԵՐԳԵՆԱՎԱՐՈՒԹԵԱՐ՝
ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆԵԱՆԻ

Ուրբաթ, 9 Մայիս, 2008-ի
Երեկոյեան ժամը 8.00-ին
Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋԱՆՈՒԿԱՆԻՍ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՉ